

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ**  
**ԻՐԱՎԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**  
**ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ք. Գորիս**

**30 մարտի 2018թ.**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99-րդ հոդվածների պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի հունվարի 19-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2018 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N15-Ա հրամանի, 2018 թվականի հունվարի 25-ի N01/17.1/426-18 հանձնարարականի և 2018 թվականի փետրվարի 2-ի N01/17.1/606-18 համաձայնության, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2018 թվականի փետրվարի 2-ի N12-Ա որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից (խմբի ղեկավար ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ Ս.Ավետիսյան) ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ 2018 թվականի մարտի 26-30-ն ընկած ժամանակահատվածում իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն (այսուհետ՝ հսկողություն) հետևյալ 17 բնագավառներում՝

Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, քաղաքաշինություն, հողօգտագործում, ընդերքօգտագործում, առևտուր և ծառայություններ, պաշտպանություն, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն, մշակույթ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, տրանսպորտ և կապ, անասնաբուժություն, բուսասանիտարիա, սննդամթերքի անվտանգություն, բնապահպանություն, ոստիկանություն, քաղաքացիական կացության ակտերի գրանցում:

1. Հիմք ընդունելով վերոնշյալ 17 բնագավառների մասով համապատասխան նախարարությունների կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա իրականացված հսկողության՝ 2018 թվականի մարտի 26-30-ն ընկած ժամանակահատվածում կազմված N1/1 և N1/2, N2, N3, N4, N5, N6, N7, N8, N9, N10, N11, N12, N13, N14, N15, N16, N17 արձանագրությունները, իրավական և մասնագիտական՝ հսկողության ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ 14 էջից բաղկացած կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների, այդ խախտումների վերացման ուղղությամբ արված առաջարկությունների և ժամկետների վերաբերյալ:

2. Խախտումները նշված ժամկետներում չվերացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները կամ անգործությունը կբողոքարկվեն դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Գորիս համայնքի ղեկավարը իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:

4. Սույն արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկը հանձնվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Գորիս համայնքի ղեկավարին:

**Հսկողություն իրականացնող  
աշխատանքային խմբի ղեկավար՝**












**Ս. Ավետիսյան**











**ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի  
համայնքի ղեկավար**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ**

«Հայունիքի մարզի Գորիս համայնքում 2018 թվականի մարտի 26-30-ն ընկած ժամանակահատվածում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքներին մասնակցած պաշտոնատար անձինք և նրանց ստորագրությունները՝»

Ը/Ը	Զբաղեցրած պաշտոնը	Ստորագրություն	Անուն, ազգանուն	Ուսումնասիրություն և կատարել հետևյալ բնագավառում
1	«Հայունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ, աշխատանքային խմբի ղեկավար		Ս Ավետիսյան	ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների իրականացում (իրավական մաս) և ոստիկանություն
2	«Հայունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ		Վ Ասրյան	ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների իրականացում (իրավական մաս)
3	«Հայունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀՕՀ բաժնի պետ		Գ Խաչատրյան	ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների իրականացում (իրավական մաս)
4	«Հայունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀՕՀ բաժնի գլխավոր մասնագետ		Ա.Զախարյան	ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների իրականացում (իրավական մաս)
5	«Հայունիքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության առաջատար մասնագետ		Գ Հարությունյան	ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների իրականացում (ֆինանսական մաս)
6	«Հայունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջին կարգի մասնագետ		Տ Գևորգյան	ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների իրականացում (ֆինանսական մաս)
7	«Հայունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի		Տ Մկրտչյան	ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների իրականացում (ֆինանսական մաս)
8	«Հայունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ		Ա Արզումանյան	Քաղաքաշինություն
9	«Հայունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ		Ա Կոստանդյան	Հողօգտագործում և ընդերքօգտագործում

10	«Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ		Է. Մարտիրոսյան	Առևտուր և ծառայություններ
11	«Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ		Ա. Գրիգորյան	Պաշտպանություն
12	«ԱԻՆ Փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության ԲՊ բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ պատր»		Մ. Պողոսյան	Արտակարգ իրավիճակներ
13	«Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների ստորնետրաման բաժնի պետ		Է. Միրզոյան	Առողջապահություն
14	«Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ		Ն. Կարապետյան	Կրթություն
15	«Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պատրաստման պատրաստ»		Վ. Արզումանյան	Սոցիալական պաշտպանություն
16	«Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ		Ա. Ոսկանյան	Սոցիալական պաշտպանություն, քաղաքացիական կացության ակտերի գրանցում
17	«Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ		Թ. Կարապետյան	Մշակույթ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ
18	«Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ		Ս. Աղաբեկյան	Տրանսպորտ և կապ
19	«Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ		Կ. Փարսադանյան	Բնության և շրջակա միջավայրի պահպանություն, անասնաբուժություն, բուսասանիտարիա սննդամթերքի անվտանգություն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱՎԱՆԱՅՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
 ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏԱՔԵՐՎԱԾ ԽԱՍՏՈՒՄՆԵՐԸ**

Սույն հավելվածում նշված խախտված դրույթների վերաբերյալ տեղեկատվության հիմքն են հսկողության 17 քննազավառների (տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, քաղաքաշինություն, հողօգտագործում, ընդերջօգտագործում, առևտուր և ծառայություններ, պաշտպանություն, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն, մշակույթ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, տրանսպորտ և կապ, անասնաբուժություն, բուսասանիտարիա, սննդամթերքի անվտանգություն, բնապահպանություն, ոստիկանություն քաղաքացիական կացության ակտերի գրանցում) մասով համապատասխան նախարարությունների կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա իրականացված հսկողության N1/1, N1/2, N2-N17 արձանագրությունները:

(Հսկողության ժամանակահատվածը՝ 2017 թվական, իսկ առանձին դրույթների մասով՝ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ստանձնման օրից՝ 2016 թվականի սեպտեմբերի 24-ից մինչև հսկողության սկսման պահը կամ՝ 2017-03-30 մինչև 2018-03-30: Այն քննազավառները, որոնցում խախտումներ չեն արձանագրված, ներքոհիշյալ աղյուսակում չեն նշվում:)

խախտված դրույթի անվանումը	Թերի է կամ Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ
1	2,3,4	5	6
<b>Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում</b>			
1 02 Համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի զարգացման ծրագրի առկայություն	Թերի է պահպանված	Համայնքի նորընտիր ղեկավարն ընտրվել է 2017 թվականի նոյեմբերի 5-ին կայացած արտահերթ ընտրության արդյունքում և իր պաշտոնն ստանձնել է 2017 թվականի նոյեմբերի 13-ին Սակայն 2018 թվականի մարտի 30-ի դրությամբ, նորընտիր համայնքի ղեկավարի կողմից համայնքի զարգացման ծրագիրը չի ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը: Համայնքի զարգացման գործող ծրագիրը հաստատված է 2016 թվականի դեկտեմբերի 25-ի N35 Ն որոշմամբ, որը համայնքի ավագանու է ներկայացրել համայնքի նախկին ղեկավարը՝ Խախտվել է ՏԻՄ օրենքի 82-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ համայնքի ղեկավարը մշակում է համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և իր լիազորություններն ստանձնելու օրվանից հետո՝ չորս ամսվա ընթացքում, ներկայացնում ավագանու հաստատմանը Համաձայն համայնքի ղեկավարի հարյուրմասն կատարվել են հաշվարկներ, պատրաստված են նախագծային փաստաթղթեր, որոնք կամրոջացվեն որպես համայնքի զարգացման ծրագիր և կներկայացվեն համայնքի ավագանու հաստատմանը:	Ավարտին հասցնել համայնքի հնգամյա զարգացման ծրագրի նախագծի կազմումը, կազմակերպել քննարկումներ, հասարակական լսումներ և ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը
1 06 Համայնքի ղեկավարի ներկայացմամբ կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ որոշման առկայություն	Չի պահպանված	Համայնքի ղեկավարի ներկայացմամբ կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ որոշում ընդունելու պահանջը գործել է մինչև 2017 թվականի հունվարի 1-ը, իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրված տարբերակի 2017 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնելու կապակցությամբ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ համայնքի կամավոր խնդիրները, սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանվում են համայնքի ավագանու որոշմամբ և նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծվում են համայնքի ավագանու սահմանած չափորոշիչներով Օրենքի պահանջը չի կատարված:	Առաջարկվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ համայնքի կամավոր խնդիրները, սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը, սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները սահմանել համայնքի ավագանու որոշմամբ:

Խախտված դրույթի անվանումը	Թերի է կամ Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ
1	2,3,4	5	6
<p>1 09 Համայնքի ղեկավարի ներկայացրած՝ բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին համաձայնություն տալու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն (ՏԻՄ օրենք 18-րդ հոդված, 1-ին մաս, 16-րդ կետ)</p>	<p>Թերի է պահպանված</p>	<p>1 Համայնքի ավագանին իր 2018 թվականի մարտի 12-ի N22-Ա որոշմամբ համաձայնություն է տվել Արտակ Սուրիկի Առուշանյանի թեկնածությանը՝ «Գորիս համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ տնօրեն նշանակելու նպատակով</p> <p>2 Համայնքի ղեկավարի 2017 թվականի հոկտեմբերի 2-ի N159-Ա կարգադրությամբ «Գորիս քաղաքի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ տնօրեն է նշանակվել Վարդուհի Էյազյանը՝ առանց համայնքի ավագանու համաձայնության Խախտվել է ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջը, համաձայն որի՝ համայնքի ավագանին իր որոշմամբ համաձայնություն է տալիս համայնքի ղեկավարի ներկայացրած՝ համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին:</p>	<p>Առաջարկվում է սահմանված կարգով թիվ 4 ՀՈԱԿ-ի տնօրենի թեկնածությունը ղեկ համայնքի ավագանու նիստում՝ քննարկման:</p>
<p>1.19 Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջարկանքները «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:</p>	<p>Թերի է պահպանված</p>	<p>Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջարկանքները հաստատված են իրավանախորդ Գորիս քաղաքային համայնքի ավագանու համապատասխան որոշումներով՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, սակայն համայնքը խոշորացումից հետո դեռևս չունի համայնքի ողջ տարածքի և նրա մեջ մտնող բնակավայրերի համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:</p>	<p>Առաջարկվում է միջոցներ ձեռնարկել անհրաժեշտ քաղաքաշինական փաստաթղթերը ձեռք բերելու ուղղությամբ:</p>
<p>1.20 Համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:</p>	<p>Չի պահպանված</p>	<p>Համայնքի ավագանու կողմից համայնքի քաղաքաշինական կանոնադրություն չի հաստատված:</p>	<p>Վերացնել թերությունները</p>
<p>1.21. Համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:</p>	<p>Չի պահպանված</p>	<p>Համայնքի հողերի օգտագործման սխեմաներ՝ համայնքի ամբողջ տարածքի համար, համայնքի ավագանու որոշմամբ չեն հաստատված:</p>	<p>Վերացնել թերությունները</p>
<p>1 23 Իր իրավասության շրջանակում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վերահսկիչ պալատի իրականացրած վերահսկողության և այլ իրավասու պետական մարմինների իրականացրած ստուգումների արդյունքների վերաբերյալ որոշման առկայություն:</p>	<p>Թերի է պահպանված</p>	<p>1. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատանքային խումբը 2017 թվականի մարտի 29-ին համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ կատարել է իրավական և մասնագիտական հսկողություն, որի արդյունքների վերաբերյալ համայնքի ավագանին ընդունել է 2017 թվականի հունիսի 28-ի N46-Ա որոշումը</p> <p>2. ՀՀ ֆինանսների նախարարի 2017-02-01 N3-Ա հանձնարարագրով համայնքապետարանում կատարված ստուգման մասին 2017 թվականի մայիսի 26-ին կազմված N3-Ա ակտի, համայնքում իրականացվել են բյուջետային գործընթացների մասով ստուգումներ, որի արդյունքները համայնքի ավագանու նիստերից որևէ մեկում չեն քննարկվել:</p>	<p>Վերացնել թերությունները և այսուհետ բացառել դրանք</p>

Խախտված դրույթի անվանումը	Թերի է կամ Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Վնասարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ
1	2,3,4	5	6
1.30 Համայնքի ավագանու անդամի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով որևէ մշտական հանձնաժողովի անդամակցությունը և դրա նիստերին մասնակցությունը:	Թերի է պահպանված	Համայնքի ավագանին իր 2017-10-17 N13-Ա որոշմամբ ստեղծել է 3 մշտական հանձնաժողով՝ 1-ին՝ գիտության, կրթության, սոցիալական, առողջապահության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և հանրային կապերի հարցերի (կազմը՝ 6 հոգի), 2-րդ՝ քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության, բնության պահպանության, կոմունալ ենթակառուցվածքներին առնչվող հարցերի (կազմը՝ 8 հոգի), 3-րդ՝ ֆինանսական, քյուջետային, տնտեսական, իրավական հարցերի և արտաքին կապերի հարցերի (կազմը՝ 6 հոգի) մշտական հանձնաժողովներ, սակայն հանձնաժողովների նիստերի անցկացման մասին արձանագրություններ չկան.	Առաջարկվում է այսուհետ ապահովել համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն՝ մշտական հանձնաժողովների կողմից անհրաժեշտ հարցերի քննարկումը և արձանագրությունների կազմումը
1.32. Համայնքի ավագանու անդամի իր մասնակցությամբ ընդունված փաստաթղթերում ստորագրության առկայություն: (ՏԻՄ օրենքի 21-րդ հոդված, 2-րդ մաս, 8-րդ կետ)	Թերի է պահպանված	Համայնքի ավագանու անդամների ստորագրությունները հիմնականում առկա են իրենց մասնակցությամբ ընդունված փաստաթղթերում: Փաստաթղթերի ստուգման ժամանակ արձանագրվել է, որ համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 11 ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավար Վաչագան Ադունցի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին» արձանագրությունը չեն ստորագրել արձանագրության կազմմանը և ընդունմանը մասնակցած, համայնքի ավագանու 2 անդամներ: Համայնքի ավագանու անդամները տվյալ դեպքում չեն պահպանել ՏԻՄ օրենքի 21 թդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի պահանջը, համաձայն որի՝ համայնքի ավագանու անդամը պարտավոր է ստորագրել իր մասնակցությամբ ընդունված փաստաթղթերը.	Համայնքի ավագանու քոլոր անդամներին իրազեկել, որ ՏԻՄ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանու անդամը պարտավոր է ստորագրել իր մասնակցությամբ ընդունված փաստաթղթերը
1.33. Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման առկայության դեպքում օրենքով սահմանված կարգով կանոնադրության հաստատման առկայություն	Չի պահպանված	Գորիսի համայնքապետարանի աշխատակազմն ունի ՔԳԱԳ բաժին, որը չունի սահմանված կարգով հաստատված կանոնադրություն:	Ապահովել ՔԳԱԿ բաժնի կանոնադրության՝ սահմանված կարգով հաստատումը:
2.12 Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմելուց և Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհներին վերաբերող մասով լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանը համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) ներկայացված լինելը:	Չի պահպանված	Ստուգվող ժամանակահատվածում նմանատիպ գործառույթներ չեն իրականացվել	Վերացնել թերությունները և այսուհետ բացառել դրանք.
2.16. Համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կարգատրների օրենքով սահմանված կարգով վարում:	Թերի է պահպանված	Համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կարգատրները թերի են վարվում.	Վերացնել թերությունները և այսուհետ բացառել դրանք.

Խախտված դրույթի անվանումը	Թերի է կամ Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ
1	2,3,4	5	6
<p>2.17 Քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման համար օրենքով սահմանված կարգով միջոցների ձեռնարկում</p>	<p>Թերի է պահպանված</p>	<p>Աշխատանքները թերի են կատարվում</p>	<p>Վերացնել թերությունները և այսուհետ բացառել դրանք:</p>
<p>2.24 Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, գույքագրման փաստաթղթերում կատարած համապատասխան փոփոխությունների առկայություն:</p>	<p>Չի պահպանված</p>	<p>Համայնքի կողմից գույք ստանալուց կամ օտարելուց հետո գույքագրման փաստաթղթերի համապատասխան փոփոխությունները չեն ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը: Խախտվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետը, 77-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի համայնքի ավագանին հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, իսկ սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում կատարում է համապատասխան փոփոխություններ, որոնք համայնքի ավագանին հաստատում է առաջիկա նիստում:</p> <p>«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համայնքի պարտադիր խնդիր է համայնքի գույքի կառավարումը: Նույն օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքի սեփականություն հանդիսացող գույքը համայնքի ղեկավարը ենթարկում է ամենամյա պարտադիր գույքագրման, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը: Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում կատարում է համապատասխան փոփոխություններ, որոնք համայնքի ավագանին հաստատում է առաջիկա նիստում:</p> <p>2016 թվականի սեպտեմբերի 18-ին համայնքի խոշորագույնից հետո նախկին 10 համայնքներին պատկանող գույքն անցել է Գորիս խոշորացված համայնքին, սակայն առ այսօր չի իրականացվել նախկին համայնքներին պատկանող գույքի հանձնում-ընդունում և չի ընդունվել համայնքի ավագանու համապատասխան որոշում՝ գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:</p>	<p>Առաջարկվում է սահմանված կարգով կատարել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրում և այսուհետ պահպանել ներկայացվող պահանջները:</p>
<p>3.01. Օրենքով սահմանված կարգով համայնքի զարգացման ծրագիրը համայնքի ավագանուն ներկայացված լինելու առկայություն: (1 02)</p>	<p>Չի պահպանված</p>	<p>Համայնքի նորընտիր ղեկավարն ընտրվել է 2017 թվականի նոյեմբերի 5-ին կայացած արտահերթ ընտրության արդյունքում և իր պաշտոնն ստանձնել է 2017 թվականի նոյեմբերի 13-ին: Սակայն 2018 թվականի մարտի 30-ի դրությամբ, նորընտիր համայնքի ղեկավարի կողմից համայնքի զարգացման ծրագիրը չի ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը: Համայնքի զարգացման գործող ծրագիրը հաստատված է 2016 թվականի դեկտեմբերի 25-ի N35-Ն որոշմամբ, որը համայնքի ավագանուն է ներկայացրել համայնքի նախկին ղեկավարը՝ խախտվել է ՏԻՄ օրենքի 82-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ համայնքի ղեկավարը մշակում է համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և իր փազդություններն ստանձնելու օրվանից հետո՝ չորս ամսվա ընթացքում, ներկայացնում ավագանու հաստատմանը: Համաձայն համայնքի ղեկավարի հաղորդման՝ կատարվել են հաշվարկներ, պատրաստված են նախագծային փաստաթղթեր, որոնք կամրոջացվեն որպես համայնքի զարգացման ծրագիր և կներկայացվեն համայնքի ավագանու հաստատմանը:</p>	<p>Ավարտին հասցնել համայնքի հնգամյա զարգացման ծրագրի նախագծի կազմումը, կազմակերպել քննարկումներ, հասարակական լուսմներ և ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:</p>

Խախտված դրույթի անվանումը	Թերի է կամ Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ
1	2,3,4	5	6
<p>3 02 Համայնքի ավագանու որոշմամբ հաստատված համայնքի զարգացման ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ) ստեղծված համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի առկայություն:</p>	<p>Չի պահպանված</p>	<p>Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու դրանց ձևավորման կարգը հաստատված են համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 28-ի N6-Ն որոշմամբ, սակայն խորհրդակցական մարմնի կազմը չի հաստատված:</p>	<p>Հաստատել խորհրդակցական մարմնի կազմը</p>
<p>1 22. Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը օրենքով սահմանված կարգով հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:</p>	<p>Չի պահպանված</p>	<p>«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համայնքի պարտադիր խնդիր է համայնքի գույքի կառավարումը: Նույն օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքի սեփականություն հանդիսացող գույքը համայնքի ղեկավարը ենթարկում է ամենամյա պարտադիր գույքագրման, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը: Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում կատարում է համապատասխան փոփոխություններ, որոնք համայնքի ավագանին հաստատում է առաջիկա նիստում:</p> <p>2016 թվականի սեպտեմբերի 18-ին համայնքի խոշորացումից հետո նախկին 10 համայնքների պատկանող գույքն անցել է Գորիս խոշորացված համայնքին, սակայն առ այսօր չի իրականացվել նախկին համայնքներին պատկանող գույքի հանձնում-ընդունում և չի ընդունվել համայնքի ավագանու համապատասխան որոշում՝ գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին: Խախտվել են օրենքի նշված դրույթները:</p>	<p>Առաջարկվում է համայնքի սեփականություն հանդիսացող գույքը պատշաճ կերպով գույքագրել, գույքի ցանկը հաստատել և այսուհետ փոփոխություններն արձանագրել գույքագրման փաստաթղթերում:</p>
<p>2 23 Ամենամյա պարտադիր գույքագրման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:</p>	<p>Չի պահպանված</p>	<p>«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համայնքի պարտադիր խնդիր է համայնքի գույքի կառավարումը: Նույն օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքի սեփականություն հանդիսացող գույքը համայնքի ղեկավարը ենթարկում է ամենամյա պարտադիր գույքագրման, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը: Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում կատարում է համապատասխան փոփոխություններ, որոնք համայնքի ավագանին հաստատում է առաջիկա նիստում:</p> <p>2016 թվականի սեպտեմբերի 18-ին համայնքի խոշորացումից հետո նախկին 10 համայնքների պատկանող գույքն անցել է Գորիս խոշորացված համայնքին, սակայն առ այսօր չի իրականացվել նախկին համայնքներին պատկանող գույքի հանձնում-ընդունում և չի ընդունվել համայնքի ավագանու համապատասխան որոշում՝ գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին: Խախտվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետը, ըստ որի համայնքի ավագանին հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը:</p>	<p>Առաջարկվում է համայնքի սեփականություն հանդիսացող գույքը պատշաճ կերպով գույքագրել, գույքի ցանկը հաստատել և այսուհետ փոփոխություններն արձանագրել գույքագրման փաստաթղթերում:</p>



Խախտված դրույթի անվանումը	Թերի է կամ Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ
1	2,3,4	5	6
3.08 Օրենքով սահմանված կարգով համայնքի ֆինանսական փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին.	Թերի է պահպանված	<p>1 Թերի են պահպանված ՀՀ կառավարության 2005թ դեկտեմբերի 25-ի N-2335-Ն որոշման որոշ դրույթներ</p> <p>2 Թերի են պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի դրույթները,</p> <p>3 Տրանսպորտային միջոցների շահագործման ուղեգրերը լրացված են թերի:</p> <p>4. Նյութերի ձեռքբերման վերաբերյալ չկա գնման անհրաժեշտությունը հիմնավորող փաստաթուղթ:</p>	Առաջարկվում է այսուհետ ուշադրություն դարձնել փաստաթղթերի ամբողջական լրացմանը և հարակից փաստաթղթերի անկայությունը.
3.20. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն և 2017 թվականի մայիսի 5-ի N526 Ն որոշումների պահանջների պահպանում.	Թերի է պահպանված	Գնման գործընթացներում չեն պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168 Ն և 2017 թվականի մայիսի 5-ի N526-Ն որոշումների որոշ դրույթներ	Գնման ընթացակարգերը կազմակերպելիս ուղղորդվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն և 2017 թվականի մայիսի 5-ի N526 Ն որոշումների դրույթներով
<b>Քաղաքաշինություն</b>			
1 01 ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված համայնքի գլխավոր հատակագծի անկայություն	Թերի է պահպանված	<p>Համայնքը բազմաբնակավայր է Գորիս քաղաքն ունի գլխավոր հատակագիծ, համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N39-Ն որոշման, իսկ մնացած 12 բնակավայրերը չունեն:</p> <p>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն</p> <p>ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի 8 խոշորացված համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը, որը վերաբերում է նաև Գորիսին:</p>	Ապահովել համայնքում անկա ելակետային տվյալների և նյութերի տրամադրումը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին
1 02. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված գոտևորման նախագծի անկայություն	Թերի է պահպանված	<p>Համայնքը բազմաբնակավայր է Գորիս քաղաքն ունի գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ, համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N 39-Ն որոշման, իսկ մնացած 12 բնակավայրերը չունեն.</p> <p>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն</p> <p>ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի խոշորացված 8 համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը</p>	Ապահովել համայնքում անկա ելակետային տվյալների և նյութերի տրամադրումը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին
